«ԱՆՀԱՏԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ-ԿՈԼԵԿՏԻՎԻԶՄ» ԲՆՈՒԹԱԳՐԻՉԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄՈԴԵԼՈՒՄ

Ինգա Վալերիի Նասիլյան
«ԴԻԳԱՍ ՏՐԱՆՍ» ՍՊԸ միջազգային բեռնափոխադրումների ընկերության տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Բոլոր դարաշրջաններում կուլտուրայի կարևոր գործառույթներից մեկը՝ արժեքայինը, հանդես է եկել որպես կայունացնող գործոն և, ներթափանցելով հասարակության գրեթե բոլոր ոլորտները, դրանցում ձևավորել որպես առանձին, ինքնուրույն ուսումնասիրության առարկա[1]: Կուլտուրայի կարևոր հատկանիշն է նրա ազգային առանձնահատկությունը: Ազգային կուլտուրան, որը բնութագրվում է մենթալիտետով, ունի այնպիսի խորքային կառուցվածքներ, որոնք որոշում են նրա ազգային յուրօրինակությունը: Որպես կանոն՝ այս կամ այն կուլտուրայի մենթալիտետը բնութագրող հատկանիշները տարբերվում են կայունությամբ և չեն փոխվում հարյուրամյակների ընթացքում[2]:

Ազգային մենթալիտետը երկու ակունք ունի. մի կողմից այն աշխարհագրական միջավայրի, բնական պայմանների ու պատմականորեն կուտակված ֆիզիոլոգիական բնույթի երևույթների հետևանք է, մյուս կողմից դրսևորվում է որպես մտածողություն և գործունեության առանձնահատկություն այլ ժողովուրդների հետ շփվելու միջոցով վերցրած և վերագնահատված արժեք՝ իբրև մշակված ավանդույթներ, սովորույթներ: Յուրաքանչյուր ազգային կուլտուրա պետք է պահպանի իր ազգային ինքնուրույնությունը, առանձնահատկությունը, բայց միևնույն ժամանակ մշակի այլ կուլտուրաների հետ ինտեգրման միջոցներ: Գլոբալացման գործընթացը, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, տարբեր երկրների և ժողովուրդների միջև կապերի լայնացումը և ինտեգրումը համաշխարհային հանրության մեջ հիմք է դառնում հաղորդակցման նոր ձևերի ստեղծմանը, որոնց արդյունավետությունը ամբողջովին կախված է մշակույթների փոխըմբռնումից, հաղորդակցվող գործընկերների կուլտուրայի հանդեպ ցուցաբերվող հարգանքից:

Այս պահանջները առանձնապես կարևոր են տնտեսական կուլտուրայի համար, որն ունի փոխհաղորդական (արժեքները, նորմերը, վարքագծի դրդապատճառներն անցյալից փոխանցվում են ներկա և ապագա), սելեկցիոն (այն ժառանգված արժեքների ընտրում, որոնք անհրաժեշտ են հասարակության

---

[1] **Сулименко Е.Г.** Влияние культуры на стабильность общества // Вопросы культурологии, М., 2008, № 6, сс. 19-24.

[2] Культурология. История и теория культуры: Учебное пособие, М.: Общество “Знание” России, ЦИНО, с. 198.

զարգացման խնդիրների լուծման համար), նորամուծական (առաջադեմ արժեքների և նորմերի մշակում, նորացում) գործառույթներ: Տնտեսագիտական կուլտուրայի ձևերից է կորպորատիվ կուլտուրան, որը տեսական և գործնական աշխատանքներում հաճախ նույն իմաստով օգտագործվում է՝ «կորպորատիվ կուլտուրա», «կազմակերպչական կուլտուրա», «կառավարման կուլտուրա», «կազմակերպության կուլտուրա» և այլ հասկացություններով: Առավել ամբողջական է «կորպորատիվ կուլտուրա» հասկացությունը, որի սահմանումը տվել է այս ոլորտի խոշոր ռուս մասնագետ Վ. Սպիվակը: Ըստ նրա՝ կորպորատիվ կուլտուրան տվյալ կորպորացիային բնորոշ նյութական և հոգևոր արժեքների, դրանց դրսևորման և համագործակցության համակարգ է, որն արտացոլում է նրա անհատականությունը, ներքին և արտաքին, սոցիալական և տնտեսական միջավայրը և արտահայտվում է վարքագծի, փոխազդեցության, սեփական և շրջապատող ըմբռնման միջոցով[1]: Կորպորատիվ կուլտուրան հատուկ ձևավորվում է (որպես կանոն՝ կազմակերպության առաջին անձանց կողմից) և համախմբում է կազմակերպության արժեքները:

Կորպորատիվ կուլտուրան առանձնապես կարևոր է այն կազմակերպություններ և երկրների համար, որոնք գտնվում են ճգնաժամային, անցումային, տնտեսական վերափոխումների շրջանում: Ռուսաստանի կառավարման մասնագետները կորպորատիվ կուլտուրան առավել կարևորում են հատկապես արդի տնտեսական բարեափոխումների շրջանում: Այսպես՝ Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ալեքսանդր Աուզանը, այդ ուղղությամբ կատարելով մի շարք հետազոտություններ, նշում է, որ Չինաստանի վերափոխումների հիմքում ընկած են ազգի դարավոր սովորույթները և արժեքները, ինչը և ապահովեց այդ գործընթացի հաջողությունը: Նա գտնում է, որ եթե Ռուսաստանը ցանկանում է հասնել նույն արդյունքներին, ապա պետք է բարեփոխումների (ռեֆորմների) ծրագրերի և հատկապես երկարաժամկետ պլանների կազմման փուլում հաշվի առնել հասարակության սոցիալ-մշակութային արժեքներ[2]: Իսկ դա ենթադրում է որոշակի համապատասխանություն օրենսդրության և մշակույթի միջև:

Ազգային կորպորատիվ կուլտուրայի ձևավորման վրա ազդում են՝ երկրի տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական, կրթական, կրոնական, գիտական, հանրայնացման, առողջապահության, գլոբալացման և այլ համակարգերը, աշխարհագրական դիրքը, ռեսուրսային ապահովվածությունը, լոգիստիկ հնարավորությունները, արժեքները, համոզմունքները, վարքագծային նորմերը, ավանդույթները, խորհրդանիշները, գաղափարները, սկզբունքները և սոցիալ-մշակույթային այլ գործոններ:

---

[1] **Спивак В.А.** Корпоративная культура, СПб.: Питер, 2001, с. 13.

[2] **Аузан А.** Реформы-как поход к стоматологу // АиФ, 2018, № 44, с. 8.

Նշված գործոնների համատեղ ազդեցությունը ազգային կորպորատիվ կուլտուրայում գնահատելու նպատակով առաջարկվում են բազմաթիվ մոդելներ, որոնց մշակման համար անհրաժեշտ է բացահայտել, թե որ բնութագրիչների համատեղ օգտագործումը կարող է հնարավորին չափով իրական ներկայացնել տվյալ ազգի կորպորատիվ կուլտուրան: Բնութագրիչները մոդելում հանդես են գալիս որպես մաթեմատիկական փոփոխականներ: Կառավարման մասնագետներն առանձնացնում են մի շարք առավել կարևոր բնութագրիչներ՝ անհատապաշտություն և կոլեկտիվիզմ, ստորակարգություն և հավասարապաշտություն, ուղղագծություն և հարգալի-ություն, մասկուլիզմ և ֆեմինիզմ, նորամուծություն, կոնֆուցիական դինամիկա և այլն[1]:

Վերջին տարիներին ռուս գիտնականների կողմից շրջանառության մեջ է դրվել նաև «եվրասիականություն» բնութագրիչը, որի չափորոշիչները հետաքրքիր են նաև հայկական կորպորատիվ կուլտուրան ուսումնասիրողների համար[2]:

Ազգային կորպորատիվ կուլտուրայի ձևավորման գործընթացում նրա վրա ազդող բոլոր գործոնները, բնութագրիչները և համակարգերը ուսումնասիրելուց հետո անհրաժեշտ է անցնել նրա ձևավորմանը՝ օգտվելով այդ բնագավառում գիտնականների կուտակած փորձից[3]: Դրանցից առավել լայն ճանաչում ունեն Հոֆսթեդի, Լեյնի և Դիստեֆանոյի, Օուչիի, Նակատայի և Սիվակումարի, Սաթեի, Պիտերս-Վատերմանի, Պարսոնսի, Քվին-Ռորբախի և այլ մոդելներ:

Աազգային կորպորատիվ կուլտուրայի մոդելի մշակման համար մասնագետը պետք է լավ ծանոթ լինի գործող մոդելների հետ, լավ իմանա կորպորատիվ կուլտուրան ձևավորող բոլոր կարևոր բնութագրիչները, որոնցից պետք է ընտրի իր կազմակերպության համար առավել արդյունավետ համատեղվողների հավաքածուն: Սույն ուսումնասիրության առարկան «անհատապաշտություն-կոլեկտիվիզմ» բնութագրիչն է, որից օգտվել են մի շարք ճանաչված մոդելների հեղինակներ (Հոֆսթեդը, Նակատան և Սիվակումարը և ուրիշներ): Առանձին մասնագետներ առաջարկում են միայն այս բնութագրիչն օգտագործել ազգային կորպորատիվ կուլտուրայի նկարագրման համար՝ տարանջատելով ըստ աշխարհագրական տարածքային պատկանելության՝ Եվրոպան և Ամերիկան որպես անհատապաշտ երկրներ, իսկ ասիական

---

[1] **Алешина И.В.** Паблик Рилейшнз для менеджеров. Учебник, М.: ИКФ “ЭКМОС”, 2002, сс. 459-472.

[2] **Никитин О.В.** Николай Трубецкой (к 120-летию со дня рождения) // Русский язык в школе, 2010, № 4, сс. 65-71.

[3] **Գյուրջյան Ա., Նասիլյան Ի.** Կորպորատիվ կուլտուրայի կառավարման հիմնախնդիրները հանրապետության կազմակերպություններում. Ուսումնական ձեռնարկ, Երևան, “Տիգրան Մեծ”, 2009, էջեր 115-129, էջեր 192-207:

երկրները (Ճապոնիա, Կորեա, Չինաստան և այլն)՝ կոլեկտիվիստական մշակույթի երկրներ: Մինչդեռ նման մոտեցմամբ անգամ մեկ կարևոր բնութագրիչը չի կարող ազգային կորպորատիվ կուլտուրան ներկայացնել ամբողջությամբ: Ուստի, կարծում ենք, որ այս բնութագրիչը անհրաժեշտ է ուսումնասիրել մանրամասնորեն՝ որպես ազգային կորպորատիվ կուլտուրայի մոդելի կարևոր բաղադրիչներից մեկը՝ ներկայացնելով այն հոգեբանական, սոցիոլոգիական և տնտեսական տեսանկյուններից:

Ըստ հոգեբանական հիմնադրույթի՝ անհատապաշտության հակվածներն իրենց տեսնում են միայնակ մարդկանց վիճակում, որոնք չեն կարողանում բավարարել իրենց կարեկցանքի և սիրո պահանջմունքները: Ըստ Ս. Սեմյոնովի՝ անհատապաշտության քարոզչությունը, ազատության դիմակի տակ, խղճի խայթից պաշտպանվածության շատ տարածված միջոց է: Այն, որ անհատապաշտությունն իր էությամբ արմատապես հակասում է մարդու առաքելությանը, կոչմանը, ակնհայտ է[1]: Սակայն մարդկային որոշ գործողություններ պահանջում են անհատապաշտություն, ուստի այն պետք է կիրառվի լրիվ հիմնավորված: Ըստ Տուրենի՝ արդի ժամանակի սոցիոլոգների ուշադրությունը բևեռված է անհատապաշտ և կոլեկտիվիստական սուբյեկտների սոցիալական տարածքի հետազոտմանը, որոնք կոլեկտիվ գործողությունների, պետական քաղաքականության և ինստիտուցիոնալ մեխանիզմների միջոցով կարող են ապահովել իրենց պահանջմունքները և ստեղծագործության ազատությունը: Սոցիոլոգների համար կարևոր է հասկանալ, թե ինչպես գլոբալացման արդի պայմաններում առավել հարուստ երկրների անհատապաշտությունը համատեղել ավանդական կուլտուրաների ագրեսիվ դիմադրության հետ: Ըստ Տուրենի՝ այստեղ անհրաժեշտ է միմյանց հետ կապել հետևյալ երեք տարրերը[2]՝

Ընդունել տնտեսական գործընթացների գլոբալ բնույթը, որը թեև ունիվերսալ չէ, սակայն ձևավորում է գործունեության ընդհանուր սահմանները:

1. Հաստատել կուլտուրական կողմնորոշումների կարևորությունը, որը նույնպես մեզ ուղղորդում է դեպի ունիվերսալ արժեքները:

2. Ընդունել յուրաքանչյուրի իրավունքը՝ ձևավորելու առաջին երկու տարրերի սեփական համակցությունը:

Շուկայական տնտեսության կառավարման տեսանկյունից շուկան առավել արդյունավետ է համարվում ատոմիստական ֆակտորների և մեկ գործարքի պայմաններում, իսկ տարբեր տիպի սոցիալական հարաբերությունները և պետության միջամտությունը տանում են անխուսափելի կորուստների: Այս անհատապաշտ փիլիսոփայությունը բնորոշ է առանձին երկրների շուկաներին:

---

[1] **Семенов С.** Предназначение долгой жизни // Наука и религия, М., 2009, № 3, сс. 4-5.

[2] **Tourain A.** Sociology after sociology// European j. of social theory, Brighton, 2007, N10 (2), p.188.

Եվրոպական և ասիական երկրներում տնտեսական գործունեությունը խոր արմատներով մտած է սոցիալական հարաբերությունների մեջ:

ԱՄՆ-ում գործում է աշխատանքի ընդունման, ազատման, աշխատավարձի անհատապաշտ ձևը, իսկ եվրոպական երկրներում մեծ է սոցիալական համագործակցության դերը: Դրա գլխավոր տարրն է՝ կոլեկտիվ պայմանագրերը գործատուների և արհմիությունների միջև (ճյուղային, երբեմն՝ ազգային մակարդակներում): Կազմակերպությունների մակարդակներում գործում են «արտադրական ժողովրդավարության» մեխանիզմները, որոնց միջոցով իրականացվում է աշխատողների մասնակցությունը կազմակերպության գործերին:

Գերմանիայում և Ճապոնիայում գոյություն ունեն միջֆիրմային սերտ կապեր, որոնք ամերիկյան հակամենաշնորհային օրենքի տեսանկյունից դիտարկվում են որպես մրցակցության սահմանափակում:

Տարածված են նաև այսպես կոչված «խաչաձևվող դիրեկտորատներ» և բանկերի մասնակցությունը կազմակերպությունների սեփականությունում և կառավարումում, ինչն արգելված է ԱՄՆ-ի օրենքով: Իսկ ինչ վերաբերում է ասիական երկրներին, ապա նրանց տնտեսվարման սուբյեկտ են ոչ թե առանձին ֆիրմաները, այլ ցանցերը, տարբեր ձևի գործարար խմբերը (օրինակ՝ «կեյրեցու» Ճապոնիայում և «չեբոլի» Հարավային Կորեայում):

Ռոնալդ Դոռը համոզված է, որ Ճապոնիան տնտեսական հաջողությունների է հասել շնորհիվ իր ավանդականության՝ ստեղծելով պայմաններ արդյունավետ համագործակցելու անձնակազմի և գործարար ընկերների հետ: Այսպիսով՝ գործողությունների սահմանափակումները անսպասելի դառնում են առավելություններ: Այս ֆենոմենը հայտնի է «եկամուտ բերող սահմանափակումներ» անվամբ[1]:

Կորպորատիվ կուլտուրայի կառավարման և դրա մոդելի ձևավորման մասնագետների կարծիքով անհատապաշտությունը (անհատական նախաձեռնություն, պատասխանատվություն, իրավունք, փոխհատուցում) ընդունված է ամերիկացիների մոտ՝ որպես հասարակական առաջընթացի շարժիչ ուժ: Անհատական հետաքրքրությունը ամերիկացու յուրաքանչյուր տնտեսական գործունեության առաջին պարտադիր պայմանն է և ընդունված է ամերիկյան մշակույթում: Անհատը այստեղ հասարակության բջիջն է, միջուկը: Ամերիկյան աշխատատեղերը կառուցված են անհատապաշտության հիման վրա, մարդիկ վարձատրվում և առաջ են քաշվում անհատապաշտության սկզբունքով: Ամերիկացիները, խմբերը կամ ֆիրմաները դիտարկում են որպես կամավոր միություններ, որոնք կարելի է փլուզել կամ լքել անհատի

[1] **Шевчук А.В.** Модели рыночной экономики: социальные ценности, идеологии, инструменты // Вопросы культурологии, М., 2009, №1, с. 69.

համապատասխան շահագրգռվածության դեպքում: Դա նշանակում է, որ մարդիկ կարող են համախմբվել ընդհանուր նպատակի շուրջ, սակայն պահպանել ինքնուրույնությունը և գործել սեփական շահերից ելնելով: Արևելքում՝ մասնավորապես Ճապոնիայում, անհատականացումը հաճախ դիտարկվում է որպես վտանգ հասարակությանը: Ճապոնիայում անհատը ինքնուրույն միավոր չէ, այլ խմբի և կորպորատիվ պատկանելության գործառույթ ունի: Կոլեկտիվիզմը և խմբային կողմնորոշումը ի սկզբանե բնորոշ են Արևելքի գործարար կուլտուրային, որտեղ հասարակության միջուկը ոչ թե անհատն է, այլ խումբը: Արևելյան կուլտուրայի կոլեկտիվիզմը բարձրացված է մինչև ինքնաբավության, բարեկամական հովանավորության (պրոտեկցիոնիզմ), տոհմայնության և խնամիության կապերի:

Անհատապաշտությունն անմիջականորեն կապված է անկախության և անձի ազատության հետ, որոնք արտահայտվում են մարդու իրավունքների հարգման, խոսքի ազատության, լրատվական միջոցների անկախության մեջ: Իսկ Արևելքի կուլտուրայի անդամը բազմաթիվ պարտավորություններով կապված է խմբի հետ: Եվրոպական ազգերը եռանդագին պահպանում են իրենց անձնական իրավունքները, մասնավոր կյանքը և սահմանափակում են խմբի ներխուժումն այնտեղ: Արևելքի կուլտուրան դատապարտում է Արևմուտքի ձգտումը՝ ամեն գնով հասնելու անհատապաշտության[1]:

Կիրառական տեսանկյունից, որպես կորպորատիվ կուլտուրայի բնութագրիչ, կարևոր է Հոֆսթեդի կարծիքը, որի մոդելում երկրորդ փոփոխականը բնութագրվում է անհատապաշտությամբ կամ այն աստիճանով, որով տվյալ երկրի մարդիկ գերադասում են գործել որպես անհատներ և ոչ թե որևէ խմբի անդամներ: Այս փոփոխականի բարձր աստիճանը նախատեսում է, որ մարդը, գտնվելով հասարակության ազատ սոցիալական կապերի պայմաններում, ինքն է հոգ տանում իր և իր ընտանիքի անդամների համար և իր գործողությունների համար կրում է լրիվ պատասխանատվություն: Այս փոփոխականը բնութագրվում է նաև կոլեկտիվականությամբ (կամ անհատապաշտության ցածր աստիճանով): Կոլեկտիվիստական հասարակարգերում մարդկանց մեջ մանկուց դաստիարակում են հարգանք դեպի այն խմբերը, որոնց անդամներն են իրենք, սովորաբար՝ դեպի ընտանիքը, ցեղը, տոհմը կամ կազմակերպությունը: Խմբի անդամների և խմբից դուրս գտնվողների միջև տարբերություն չի դրվում: Խմբի անդամները դժբախտության դեպքում խմբից սպասումներ ունեն, որի փոխարեն ամբողջ կյանքում վարձահատույց են լինում խմբին: Անհատապաշտական հասարակարգերում մանկուց սովորեցնում են իրենց մասին մտածել «Ես»-ի ելակետից, ոչ թե «Մենք»-

[1] **Алешина И.В**. Паблик Рилейшнз для менеджеров: Учебник, М.: ИКФ “ЭКМОС”, 2002, сс. 459-462.

ի[1]:

Հայկական ազգային կորպորատիվ կուլտուրայի կառավարման մոդելի մշակման գործընթացում «անհատապաշտություն-կոլեկտիվիզմ» բնութագրիչի ուսումնասիրման գործում օգտակար կարող են հանդիսանալ ռուս մասնագետի, մասնավորապես Ե.Տալալակինայի հետազոտությունը ռուսական իրականության օրինակով[2]: Հեղինակը տվել է այս բնութագրիչների սահմանումները և համեմատության է ենթարկել դրանց կարգավիճակը ամերիկյան և ռուսական կորպորատիվ կուլտուրաներում: Ըստ նրա՝ անհատապաշտությունը հիմնված է այն դրույթի վրա, որ յուրաքանչյուր մարդ իրենից ներկայացնում է ուրիշներից զատ ինքնաբավ ամբողջություն: Յուրաքանչյուրն ստանում է որոշ չափով հավասար իրավունքներ և պարտավորություններ, իսկ ինքնագիտակցությունը կառուցվում է անձնական հաջողությունների վրա՝ անձնական կյանքում, նվաճումներ ուսման մեջ, առաջխաղացում:

Ամերիկացիներն իրենց սեփական անհատապաշտությունը ընկալում են որպես անհատի առաջնային կարևորություն, կողմնորոշվածություն դեպի ինքնաբավարարվածություն և անհատական ազատություն:

Կոլեկտիվիզմը, ընդհակառակը, մարդուն դիտարկում է որպես ամբողջության մի մաս՝ ընտանիքի, հասարակության, ժողովրդի: Բոլոր մարդիկ համարվում են փոխկապակցված: Այստեղ ինքնագիտակցությունը կառուցվում է այն բանի վրա, թե ինչ դեր է խաղում մարդը խմբում:

Ռուսական կուլտուրան, ըստ Ե. Տալալակինայի, ավանդականորեն համարվում է կոլեկտիվիստական, ընդհանրական: Գիտնականները գտնում են, որ ռուսները ցուցաբերում են ցածր հետաքրքրություն դեպի անհատական նվաճումները, բարձր են անձնական փոխհարաբերությունների արժեքները, կողմնորոշված են դեպի խմբային և ընտանեկան արժեքները: Ընդհանուր առմամբ անհատապաշտական ուղղվածությունը նախատեսում է այնպիսի հատկանիշների զարգացում, որոնք նպաստում են սեփական, անկախ «Ես»-ի զարգացմանը: Խոսքը ինքնաբավարարության, ինքնավստահության, ինքնակարգապահության մասին է, և զարմանալի չէ, որ անգլերեն լեզվում լայնորեն գործածվում են հետևյալ արտահայտությունները՝ «միայն սեփական անձի վրա հույս դնելու սովորույթ», «մարդ, որն ինքն է ստեղծում իրեն»:

Կոլեկտիվիստական ուղղվածությունը, ընդհակառակը, խրախուսում է այն հատկանիշների զարգացումը, որոնք կարող են նպաստել խմբում

---

[1] **Карташова Л.В., Никонова Т.В., Соломанидина Т.О.** Организационное поведение: Учебник, М.: Инфра-М, 2002, с.12.

[2] **Талалакина Е.** Кто мы: индивидуалисты или коллективисты? // Наука и жизнь, М., 2010, №11, сс. 116-120.

հարմարակյաց գոյությանը: Դրանք են՝ փոխօգնությունը, փոխաջակցումը, փոխադարձ վերահսկողությունը:

Ե.Տալալակինան ռուս-ամերիկյան կորպորատիվ կուլտուրայի «անհատապաշտություն-կոլեկտիվիզմ» բնութագրիչի համեմատական վերլուծությունը իրականացրել է՝ ուսումնասիրելով հետևյալ ոլորտները՝ ուսուցման գործընթաց, զանգվածային մշակույթ, վերաբերմունք խմբային աշխատանքին, որոշումների ընդունման համակարգ ընտանիքում, վերաբերմունք առաջընթացի, ժամանակի և հաղորդակցման հանդեպ, մրցակցություն կամ համագործակցություն, վերաբերմունք սեփականության հանդեպ, ինքնաարտահայտում:

Հարցին անդրադարձել է նաև Ա. Աուզանը: Նա կարևորելով ազգային մշակույթը կառավարման համակարգում, որպես կորպորատիվ կուլտուրայի մոդելի բնութագրիչ՝ առանձնացրել է «անհատապաշտություն-կոլեկտիվիզմ»-ը, նշելով, որ արդեն 200 տարի Ռուսաստանում չեն դադարում վեճերը այն մասին, թե ռուսը, որպես անձ, հանրության մի մասն է, թե անհատ է, այսինքն՝ կոլեկտիվիստ է, թե անհատապաշտ: Ա. Աուզենի նախաձեռնությամբ անց է կացվել հարցում, որի արդյունքները հաստատել են Ազգային նախագծերի ինստիտուտի փորձագետների այն ենթադրությունը, որ, համաձայն Հոֆսթեդի մոդելի, Ռուսաստանում անհատապաշտության և կոլեկտիվիզմի ցուցանիշը մոտ է միջինին[1]: Ըստ հեղինակի՝ դա մեծ առավելություն է, ինչը թույլ է տալիս օգտագործել ինչպես չինական, ճապոնական, այնպես էլ շվեդական և ամերիկյան սոցիալական տեխնոլոգիաները: Նույն գնահատականն է տվել այս բնութագրիչին Օ.Վիխանսկին[2]: Հայկական ազգային կորպորատիվ կուլտուրայի մոդելի մշակման վերաբերյալ մեր կողմից նույնպես կատարվել են որոշակի աշխատանքներ:

Ուսումնասիրելով հայ տնտեսագիտական, իրավաբանական և սոցիալ-փիլիսոփայական մտքի զարգացմանը նվիրված աշխատությունները և օգտվելով հայ պատմիչների գրառումներից, ժողովրդական առասպելներից՝ բացահայտվել են կառավարչական մտքի զարգացման ուրվագծերը հայկական կորպորատիվ կուլտուրայի մոդելի բնութագրիչները և դրանցից մեկի՝ «անհատապաշտություն-կոլեկտիվիզմ»-ի ազգային հատկանիշները՝ հիմք ընդունելով Հոֆսթեդի մոդելը[3]: Հետազոտությունները ցույց են տվել, որ հայն իր պատմությամբ և մենթալիտետով եղել է և շարունակում է մնալ եվրոպացի,

---

[1] **Аузан А.** Реформы-как поход к стоматологу // АиФ, 2018, № 44, с.8.

[2] **Виханский О. С., Наумов А. И.** Менеджмент, М.: Гардарика, 1998, с. 461.

[3] **Գյուրջյան Ա., Նասիլյան Ի.** Կորպորատիվ կուլտուրայի կառավարման հիմնախնդիրները հանրապետության կազմակերպություններում. Ուսումնական ձեռնարկ, Երևան, “Տիգրան Մեծ”, 2009, էջեր 208-284:

սակայն նա հեռու է եվրոպական անհատապաշտությունից: Ունենալով անհատապաշտությանը բնորոշ ակտիվություն՝ մարդկային գործունեության անհատական ասպարեզում (գիտություն, սպորտ, արվեստ և այլն) հային միևնույն ժամանակ բնորոշ է կլանային (տոհմային) բնութագիրը՝ որպես արևելյան դասական կոլեկտիվիզմի առանձնահատկություն: Անհատապաշտության կլանային, տոհմային բնույթն ունի պատմական արմատներ և առաջ է քաշում հետևյալ պահանջները՝ աշխատանքի ընդունելու գործընթացում այլ հավասար պայմաններում նպատակահարմար է առավելություններ տալ աշխատողների ընտանիքի անդամներին և մտերիմներին, նախատեսել մի շարք արտաաշխատանքային միջոցառումներ աշխատակիցների ընտանիքների մասնակցությամբ, միջամտել աշխատակիցների զավակների կրթության հարցին և այլն: Տոհմային անհատապաշտության հատկանիշի արդյունավետ օգտագործման դեպքում կարելի է զգալիորեն բարձրացնել աշխատակիցների նվիրվածությունը կազմակերպությանը:

Հաշվի առնելով Հայաստանի՝ եվրոպական երկիր լինելու հանգամանքը և այն փաստը, որ 20-րդ դարի կառավարման գիտության առաջադեմ մտքերը (Ֆայոլ, Թեյլոր, Ֆորդ և այլն), հայազգի մտածողների մոտ ձևավորվել էին դեռ սկսած միջնադարից (Տաթևացի, Շնորհալի, Մխիթար Գոշ և այլն), ապա մեր ժամանակի յուրաքանչյուր համաշխարհային առաջադեմ փորձը կորպորատիվ կուլտուրայի ձևավորման բնագավառում հայերը կարող են առանց բարդությունների արդյունավետ կիրառել՝ միայն համաձայնեցնելով այն ազգային մտածելակերպի հետ[1]:

«Անհատապաշտություն-կոլեկտիվիզմ»-ը հայկական ազգային կորպորատիվ կուլտուրայում ճիշտ է ամփոփել Հր. Շաքարյանը: Ըստ նրա՝ «Հայկական էթնոհոգեբանական ավանդույթներում անհատականացված է առօրեական մտածելակերպը: Այն կազմավորվել է դարեր շարունակ ազգը միավորող պետականության բացակայության պայմաններում, երբ սովորական մահկանացուն ինքնպաշտպանական բնազդով մղվել է ապավեն փնտրելու սեփական օջախի, ընկերոջ և հարևանի շրջանակներում: Այսպես է ձևավորվել տեղական կլանային կենսափորձի պաշտամունքը հայի աշխարհայացքային կողմնորոշումներում: Այն է՝ կլանային անհատապաշտությունը և յուրօրինակ կլանային սուբյեկտիվիզմը, որը հեռու է եվրոպական անհատապաշտությունից»[2]:

Հայի անհատապաշտության մասին է վկայում ստեղծագործական մտքի

---

[1] **Գյուրջյան Ա., Նասիլյան Ի.** Կորպորատիվ կուլտուրայի կառավարման հիմնախնդիրները հանրապետության կազմակերպություններում. Ուսումնական ձեռնարկ, Երևան, “Տիգրան Մեծ”, 2009, էջեր 289-290:

[2] **Շաքարյան Հր.** Փիլիսոփայություն, Երևան, Երևանի համալս.հրատ., 2005, էջ 40:

ակնհայտ ակտիվությունը մարդկային գործունեության անհատական ասպարեզներում, գիտության բնագավառում և արվեստում, նույնիսկ սպորտի անհատական ձևերում: Գուցե նմանօրինակ մտածելակերպի հետ է առնչվում նաև հայոց ավանդական գործարարական ոգին, մասնավորապես Ի. Կանտի կողմից բարձր գնահատված հայի հայտնի առևտրական շնորհքը՝ իբրև ժամանակին ճանաչված մշակութային մեծ արժեք[1]: Այս մեկնաբանումը համապատասխանում է մեր կողմից կատարած հետազոտությունների արդյունքներին:

Հաշվի առնելով հայ ազգի անհատապաշտության և կոլեկտիվիզմի հավասարաչափությունը՝ այդ բնութագրիչը Հոֆսթեդի մոդելի 100-բալային համակարգում գնահատվել է Ռուսաստանում՝ 50 բալով: Այլ երկրներում այս բնութագրիչն ունի հետևյալ գնահատականը՝ ԱՄՆ՝ 91, Գերմանիա՝ 67, Ճապոնիա՝ 46, Ֆրանսիա՝ 71, Հոլանդիա՝ 80, Հոնկոնգ՝ 25, Ինդոնեզիա՝ 14, Արևմտյա Աֆրիկա՝ 20[2]: Հայկական ազգային կորպորատիվ կուլտուրայի այս բնութագրիչի գնահատականն ունի իր առավելությունները, քանի որ թույլ է տալիս արդյունավետ համագործակցել և՛ Արևելքի, և՛ Արևմուտքի հետ: Սակայն նույն բնութագրիչ ունեցող երկրներն ունենում են տարբեր ցուցանիշներ (օրինակ՝ անհատապաշտ ԱՄՆ՝ 91 և Ֆրանսիան՝ 71) և դրանով տարբերվում են իրենց անհատապաշտության աստիճանով, ուստի առաջարկում ենք կոնկրետ երկրի հետ գործնական հարաբերություններ հաստատելու դեպքում ձևավորել նրանց հետ այս բնութագրիչին համապատասխան վարքագիծ:

«ԱՆՀԱՏԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ-ԿՈԼԵԿՏԻՎԻԶՄ» ԲՆՈՒԹԱԳՐԻՉԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄՈԴԵԼՈՒՄ

Ինգա Վալերիի Նասիլյան
«ԴԻԳԱՍ ՏՐԱՆՍ» ՍՊԸ միջազգային բեռնափոխադրումների ընկերության տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Համառոտագիր

Արդի ժամանակում երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը արդյունաբեր կառավարելու կարևոր առանձնահատկություններից է նրա կողմնորոշվածությունը դեպի ազգային արժեքները և մենթալիտետը, ինչը արդիականացնում է ազգային կորպորատիվ կուլտուրայի մոդելների մշակումը:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 46:

[2] **Виханский О. С., Наумов А. И.** Менеджмент, М..: Гардарика, 1998, с. 461.

Հոդվածում ներկայացված են այն հիմնական գործոնները և հայտնի մոդելների բնութագրիչները, որոնք ազդում են մոդելավորման գործընթացի վրա: Ուսումնասիրված է մոդելների բնութագրիչներից մեկը՝ «անհատապաշտություն-կոլեկտիվիզմ»-ը, տրված են դրանց սահմանումները, ազգային առանձնահատկությունները և գնահատման մոտեցումները: Առանձին դիտարկվել են այս բնութագրիչի դրսևորումները տարբեր երկրներում, նույն թվում և Հայաստանում, որոնց հիման վրա ներկայացված են համագործակցության կոնկրետ առաջարկներ:

Հիմնաբառեր. կորպորատիվ կուլտուրա, արժեքներ, ազգային մենթալիտետ, մոդելներ, բնութագրիչներ, անհատապաշտություն, կոլեկտիվիզմ, համագործակցություն, տոհմային անհատապաշտություն, բալային գնահատում:

ОСОБЕННОСТИ ХАРАКТЕРИСТИКИ “ИНДИВИДУАЛЬНОСТЬ-КОЛЛЕКТИВИЗМ” В МОДЕЛЯХ НАЦИОНАЛЬНЫХ КОРПОРАТИВНЫХ КУЛЬТУР

Инга Валерьевна Насилян

Директор компании международных грузоперевозок ООО "ДИГАС ТРАНС", кандидат экономических наук, доцент

Аннотация

Важной особенностью современного эффективного управления социально-экономическим развитием страны является её ориентированность на национальные ценности и менталитет, что делает актуальнуй разработку. В статье представлены те основные факторы и характеристики известных моделей, которые влияют на процесс моделирования. Изучена одна из важных характеристик моделей: “индивидуальность-коллективизм”, даны её определения, национальные особенности и методы оценки. Отдельно рассмотрены проявления. Этой характеристики в моделях различных стран, в том числе и в Армении, на основе которух представлены конкретные предложенияпо сотрудничеству.

Ключевые слова: корпоративная культура, ценности, национальный менталитет, модели, характеристики, клановый индивидуальизм, коллективизм, сотрудничество, клановый индивидуальизм, балловая оценка.

THE PARTICULARITIES OF CHARACTERISTIC OF "INDIVIDUALISM-COLLECTIVISM" IN THE MODELS OF THE NATIONAL CORPORATE CULTURE

Inga Valery Nasilyan
Director of International Cargo Transportation Company "DIGAS TRANS" LLC,
PhD in Economics, associate professor

Abstract

Nowadays the orientation to the national values and mentality is one of the most important factors for efficient management of socio-economic development of a country that makes actual the development of national models of corporate cultures.

In the article the main factors and well-known characteristics are presented that have an influence on the process of modeling.

In particular, we have studied one of the characteristics of models: "Individualism-collectivism", definitions, national particularities and valuation methods have been given. We have reviewed separately the developments of characteristics in different countries as well as in Armenia. Specific proposals of cooperation are presented based on the research.

Keywords: corporate culture, values, national mentality, models, characteristics, individualism, collectivism, cooperation, tribal individualism, numerical score.